ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԹԵՎՈՍՅԱՆ ՄԱՐԻԱ ՎՌԱՄԻ

ԱՆՁԻ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿՈՆՖԼԻԿՏԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

ԺԹ.00.01. “Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն” մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

Երևան 2014

Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Մելս Պարգևի Մկրտումյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Ասյա Սուրենի Բերբերյան**

հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ **Սյուզի Ֆելիքսի Սարգսյան**

Առաջատար կազմակերպություն՝ Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կկայանա 2014թ. հոկտեմբերի 28–ին, ժամը 12.00-ին, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանին առընթեր գիտական աստիճաններ շնորհող ԲՈՀ-ի Փիլիսոփայության և հոգեբանության 064 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0010, ք. Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2014թ. սեպտեմբերի 28-ին:

Փիլիսոփայության և հոգեբանության 064 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ **Կ.Ե. Վարդանյան**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Հայ հասարակության մեջ վերջին տասնամյակների ընթացքում տեղ գտած փոխակերպման խորքային գործընթացները ներթափանցել են մարդկանց կենսագործունեության կարևորագույն ոլորտները՝ ներգործելով հասարակական և միջանձնային հարաբերությունների վրա (Ս.Ռ. Գևորգյան, Մ.Պ. Մկրտումյան, Գ.Մ. Շահվերդյան, Ն. Հակոբյան և այլոք): Ժամանակակից հասարակության անքակտելի մասն են կազմում տնտեսական, սոցիալական, քաղաքական փոխակերպումները, որոնք անխուսափելիորեն առաջացնում են սոցիալական ճգնաժամ և անկայունություն, որն էլ օրինաչափորեն ազդում է մարդկանց գիտակցության և մտածողության, սոցիալական պատկերացումների և արժեքների փոփոխության վրա: Կյանքի տեմպի զգալի արագացումը, տեղեկատվական, սոցիալ-տնտեսական, կենցաղային սթրեսների առատությունը հանգեցնում է հասարակության “շարժուն անհավասարակշռության„ վիճակի ձևավորմանը (Կ. Ա. Աբուլխանովա): Այդ գործընթացին նպաստում են նաև կենսագործունեության անբարենպաստ պայմանները, նյարդային լարվածությունը, սոցիալ-տնտեսական սղաճերը, հավանական վտանգներն ու սպառնալիքները, որոնք հանգեցնում են անձի ընդհանուր և հոգեկան աշխատունակության նվազեցմանը, լարվածությանը, կոնֆլիկտայնությանն ու ագրեսիվության աճին: Այս առումով կոնֆլիկտային իրավիճակում անձի ինքնակարգավորումը ենթադրում է կոնֆլիկտային իրավիճակների հավանական զարգացումների վերլուծություն և դրանց հաղթահարման հարցում ստեղծագործական մոտեցման կիրառում:

Հասարակության զարգացման ժամանակակից փուլում, գիտատեխնիկական առաջընթացի համայնապատկերի վրա տեղեկատվական հեղեղի դիմակայման, դրա յուրացման և մշակման գործընթացում մեծանում է անձի ինտելեկտուալ-իմացական գործառույթների դերը: Գործունեության տարբեր ոլորտներում հաջողության նվաճումը մեծապես պայմանավորված է գործունեության սուբյեկտի ակտիվությամբ և ներգրավվածությամբ:

Գրականության աղբյուրների բազմակողմանի վերլուծությունը ցույց է տալիս, որ մտածողության առանձնահատկությունները և դրանց կիրառությունը կոնֆլիկտային իրավիճակների լուծման համար հատուկ կարևորություն են ձեռք բերում անձի և հասարակության անցումային շրջաններում (Ն.Վ. Գրիշինա, Ս.Ռ. Գևորգյան Կ. Ա. Աբուլխանովա և այլոք): Դրանցում տեղի են ունենում հասարակական հարաբերությունների նոր ձևերի և անձի զարգացման որակական նոր փոփոխություններ:

Կենսական և մասնագիտական նպատակների ձևավորումը և իրացումը շատ կողմերով պայմանավորված է անձի իմացական ոլորտի զարգացման մակարդակով, մասնավորապես մտածողության ստեղծագործական բաղադրիչների արդյունավետությամբ:

Չնայած կենսագործունեության տարբեր ոլորտներում կոնֆլիկտների (Ա. Յա. Անցուպով, Ն.Վ. Գրիշինա, Կ. Լևին, Ս.Ռ. Գևորգյան, Վ.Ս. Մերլին, Բ. Ի. Հասան, Մ. Մ. Կաշապով և այլոք), ինչպես նաև մտածողության և ստեղծարարության հիմնախնդրի վերաբերյալ (Լ.Ս. Վիգոտսկի, Ս.Լ. Ռուբինշտեյն, Ժ. Պիաժե, Օ.Կ. Տիխոմիրով, Ա.Վ. Բրուշլինսկի, Կ.Վ. Ոսկանյան, Յա.Ա. Պոնոմարյով, Լ.Մ. Վեկկեր, Ջ. Գիլֆորդ և այլոք) կատարված հետազոտությունների առատությանը, շատ առումներով նոր իրականության մեջ, հատկապես կոնֆլիկտային իրավիճակներում մտածողության առանձնահատկությունների զարգացման և գործադրման խնդիրը հոգեբանական գիտության ինչպես տեսական, այնպես էլ պրակտիկայի ասպարեզներում, դեռևս բավարար չափով հետազոտված չէ: Մասնավորապես հարցը վերաբերում է անձի զարգացման տարբեր փուլերում կոնֆլիկտային իրավիճակում մտածողության առանձնահատկությունների բացահայտմանը:

Հետազոտության օբյեկտն է՝ մտածողության հոգեբանական առանձնահատկությունները պրոբլեմայնության, կոնֆլիկտայնության, ինտեգրալության բնութագրիչների ներքո:

Հետազոտության առարկան է՝ մտածողության առանձնահատկությունների և անձի կոնֆլիկտայնության որակների հարաբերակցությունը:

Հետազոտության նպատակը մտածողության առանձնահատկությունների ուսումնասիրումն է՝ անձի կոնֆլիկտայնության բաղադրիչների հետ հարաբերակցության մեջ:

Հետազոտության գիտական վարկածը: Ենթադրվում է, որ կոնֆլիկտային իրավիճակների լուծմանը նպաստող մտածողության առանձնահատկությունների արտահայտվածությունը նվազեցնում է անձի կոնֆլիկտայնությունը: Մտածողության ստեղծագործական առանձնահատկությունները նվազեցնում են անձի ագրեսիվ, թշնամական դրսևորումները՝ նպաստելով կառուցողական վարքի նոր ձևերի ընտրությանն ու կառուցմանը:

Ուսումնասիրության գիտական վարկածից և նպատակից բխում են հետևյալ **խնդիրները:**

1. Գրականության ուսումնասիրության միջոցով վերլուծել սուբյեկտի մտածողության հիմնախնդիրը:

2. Վերլուծության ենթարկել կոնֆլիկտի և անձի կոնֆլիկտայնության հոգեբանական բաղադրիչների վերաբերյալ հոգեբանական գիտության մեջ առկա հիմնական մոտեցումները:

3. Տեսանելի դարձնել մտածողության կոգնիտիվ և անձնային առանձնահատկությունների ազդեցությունը կոնֆլիկտային իրավիճակի լուծման վրա:

4. Փորձարարական եղանակով հետազոտել աշակերտների և ուսանողների մտածողության առանձնահատկությունները և անձնային որակները:

5. Ցույց տալ տղաների և աղջիկների ստեղծագործական մտածողության նշանակությունը կոնֆլիկտների հաղթահարման գործընթացում:

6. Հետազոտել ստեղծարար և ոչ ստեղծարար աշակերտների, ուսանողների ստեղծագործական մտածողության, անձնային առանձնահատկությունների և կոնֆլիկտներում դրսևորվող վարքի փոխկապակցվածությունը:

7. Ուսումնասիրել մտածողության և հույզերի փոխկապակցվածության առանձնահատկությունները՝ որպես անձի կոնֆլիկտայնության բաղադրիչներ:

Հետազոտության գիտական նորույթը: Բացահայտվել են անձի կոնֆլիկտայնության հիմնական բաղադրիչների հարաբերակցության և փոխկապակցվածության առանձնահատկությունները, միևնույն ժամանակ փոխկապակցված բաղադրիչների բարդ համակարգում մտածողության առանձնահատկությունները դիտարկվել են որպես անձի կոնֆլիկտայնության վրա ազդող կառուցողական գործոն:

Բացահայտվել են անձի կոնֆլիկտայնությունը պայմանավորող և կոնֆլիկտային իրավիճակի զարգացման վրա ազդող կառուցողական և ապակառուցողական գործոնները, ինչպես նաև ստեղծագործական մտածողության և անձի հուզական, անձնային ու վարքային բնութագրիչների հարաբերակցության առանձնահատկությունները:

Հետազոտության տեսական նշանակությունը: Անձի մտածողության առանձնահատկությունների և կոնֆլիկտայնության հարաբերակցության հիմնախնդրի մշակումը նորովի լույս է սփռում մտածողության հոգեբանության տեսական հարցերի վրա, ինչպես նաև հարստացնում կոնֆլիկտաբանության և անձի ձևավորման վերաբերյալ տեսական պատկերացումներն ու հոգեբանական հիմնադրույթները: Հետազոտությունը հնարավորություն է տալիս ճշտել և ընդլայնել անձի ստեղծագործական մտածողության, կոնֆլիկտային իրավիճակներում կառուցողական վարքի ձևավորման և անձի կոնֆլիկտայնության

նվազեցման հարցերում դրա առանձնահատկությունների ազդեցության շուրջ եղած գիտական պատկերացումների շրջանակը:

Հետազոտության գործնական նշանակությունը: Հետազոտության արդյունքները կարող են կիրառվել կրթության ոլորտում կոնֆլիկտների կանխարգելման նպատակով ապակառուցողական միտումների ախտորոշման, տարբեր նշանակության կադրերի հոգեբանական ընտրության, մասնագիտական կողմնորոշման գործընթացների արդյունավետ իրականացմաը: Մեթոդական ցուցումներն ու հանձնարարականները կարող են կիրառվել կրթության համակարգում հոգեբանական ծառայությունների կողմից անհատական և խմբային աշխատանքներում: Հետազոտության նյութերը կարող են կիրառվել դպրոցի հոգեբանների, մակավարժների կողմից սովորողների կոնֆլիկտայնության և մտածողության առանձնահատկությունների բացահայտման, աշակերտների ստեղծագործական մտածողության խթանման, ինչպես նաև կարող են ներդրվել ուսուցիչների կոնֆլիկտաբանական կոմպետենտության զարգացման գործընթացի բարելավմանը:

Հետազոտության համար մեթոդաբանական հիմք են հանդիսացել հոգեբանության բնագավառում գործունեության վրա հիմնված մոտեցումը և մտածողության ակտիվ բնույթի ընդունումը (Ա.Ն. Լեոնտև, Ս.Լ. Ռուբինշտեյն, Ա.Վ. Բրուշլինսկի, Օ.Կ. Տիխոմիրով և այլոք), հոգեկան երևույթների սոցիալական պատճառականության սկզբունքը (Ս.Լ. Ռուբինշտեյն, Լ.Ս. Վիգոտսկի, Բ.Ֆ. Լոմով և ալյոք), մտածողության՝ որպես հոգեկան գորընթացի համակարգվածությունն ու ինտեգրատիվությունը (Լ.Ս. Վիգոտսկի, Վ.Վ. Դավիդով, Դ.Ի. Ֆելդշտեյն և այլոք), գործունեության մեջ մտածողության և անձի միասնականություն սկզբունքը (Կ.Վ. Ոսկանյան, Ս.Լ.Ռուբինշտեյն, Բ.Գ. Անանև):

Հետազոտության մեթոդները: Հետազոտությանն հիմնախնդրի վերաբերյալ գրականության տեսական վերլուծություն, դիտում, հոգեբանական զրույց, ոչ ստանդարտացված հարցազրույց, հոգեբանական թեստավորում, փորձարարական տվյալների որակական և քանակական վերլուծություն: Հետազոտության ընթացքում կիրառվել են հետևյալ մեթոդիկաները՝ Ֆ. Վիլյամսի “ստեղծարարական թեստերի հավաքածուն”, Ջ. Ռավենի “պրոգրեսիվ մատրիցաների թեստը”, Կ. Ն. Թոմասի “կոնֆլիկտներում վարքի մարտավարությունների որոշման մեթոդիկան”, Վ. Ա.Ռոզանովայի “անձի կոնֆլիկտայնության մակարդակի ինքնագնահատման հարցարանը”, Բաս-Դարկի հարցարանը, Մ.Մնայդերի “սոցիալական ինքնավերահսկողության սանդղակը”, Ռ. Քեթելի “անձի բազմագործոնային հետազոտության մեթոդիկան”:

Արդյունքների հավաստիությունն ու վալիդությունը ապահովված են հետազոտության մեթոդոլոգիական հիմքերով, հուսալիության և վալիդության բարձր աստիճան ունեցող մեթոդիկաների համակարգված կիրառմամբ, տվյալների մշակման մաթեմատիկական մեթոդների, ինչպես նաև տարբեր ԲՈՒՀերի մասնագիտական ամբիոնների մասնագետների հետ համատեղ աշխատանքի կազմակերպման շնորհիվ:

Հետազոտության փուլերը: Հետազոտությունը կատարվել է հետևյալ փուլերով՝

1-ին փուլում 50 դեռահասներից և պատանիներից բաղկացած ընտրանքի հետ իրականացված պիլոտային հետազոտության արդյունքում ձևակերպվել է վարկածը և հետազոտվող գործոնների ախտորոշման մոդելը:

2-րդ փուլում կատարվել է մեթոդիկաների ընտրությունը, կազմվել է հիմնական փորձարարական հետազոտության նպատակին և խնդիրներին համապատասխանող թեստերի համակարգը:

3-րդ փուլում իրականացվել է ստեղծագործող և չստեղծագործող աշակերտների և ուսանողների, մտածողության առանձնահատկությունների և անձի կոնֆլիկտայնության բաղադրիչների հարաբերակցության ուսումնասիրությանն ուղղված փորձարարական հետազոտություն: Իրականացվել է նաև հետազոտության տվյալների համեմատական և հարաբերակցային վերլուծություն:

4-րդ փուլում կատարվել է ստացված արդյունքների ընդհանրացում, վերլուծություն և մեկնաբանում, որի հիման վրա ձևակերպվել են համապատասխան եզրակացություններ:

5-րդ փուլում ստացված տվյալների հիման վրա մշակվել են մեթոդական ցուցումները և կոնֆլիկտային իրավիճակների արդյունավետ լուծմանն ուղղված ստեղծագործական մտածողության զարգացման թրենինգի ծրագիրը:

Հետազոտության ընտրակազմը: Փորձարարական հետազոտությունն իրականացվել է Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ գեղարվեստի, պատմության և իրավագիտության, հատուկ կրթության ֆակուլտետներում, Լ. Շանթի անվան թիվ 4 դպրոցում, Ղ. Սարյանի անվան թիվ 1 արվեստի դպրոցում, “Այգ” հոգեբանական կենտրոնում: Հետազոտությանը մասնակցել են 120 աշակերտ և 120 ուսանող:

Հետազոտության արդյունքների փորձաքննությունը և ներդրումը: Հետազոտության հիմնական դրույթները և արդյունքները պարբերաբար քննարկվել են Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ հոգեբանության տեսության և պատմության ամբիոնում, “Այգ” հոգեբանական կենտրոնում, Լ. Շանթի անվան դպրոցում, միջազգային ու հանրապետական գիտագործնական

գիտաժողովներում: Հետազոտության նյութերը պարբերաբար հրատարակվել են ՀՀ ԲՈՀ-ի կողմից հավատարմագրված գիտական հանդեսներում:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները:

1. Մտածողության գործընթացների ակտիվության դրսևորումները պայմանավորում են կոնֆլիկտների լուծման ելքը՝ շնորհիվ անձի ինտելեկտուալ և ստեղծագործական հնարավորությունների:

2. Կոնֆլիկտայնությունը անձի զարգացման անհրաժեշտ բաղադրիչներից է, որը պայմանավորված է կոնֆլիկտային իրավիճակների լուծման համար անհրաժեշտ ներքին հոգեբանական պայմաններով, ինչը իրականացվում է ճանաչողական բաղադրիչի դրսևորման և զարգացման միջոցով: Կոնֆլիկտների ծագման և հաղթահարման հարցում կենտրոնական դերը պատկանում է մտածողության սուբյեկտին:

3. Կոնֆլիկտային իրավիճակը հանդիսանում է համալիր գործընթաց, որի կորիզը կազմում է իրական հիմնախնդիրը՝ իր հակասություններով, որոնք խթանում են լուծմանն ու վերափոխմանն ուղղված ինտելեկտուալ-ստեղծագործական գործընթացները: Խնդրի անլուծելի լինելու սուբյեկտիվ զգացողությունը, դրա լուծումը գտնելու կենսական անհրաժեշտությունը մոտիվացնում է անձին՝ նպաստելով նրա մտածողության ստեղծագործական բաղադրիչների դրսևորմանն ու զարգացմանը:

4. Ստեղծագործական մտածողությունը, ինտելեկտը և անձի կոնֆլիկտայնուիթյունը պայմանավորող գործոնները, ինչպես նաև կոնֆլիկտային իրավիճակի հանգուցալուծման առանձնահատկությունները փախկապակցված են: Անձի ստեղծագործական մտածողության և ինտելեկտի զարգացման մակարդակները դրական կապի մեջ են գտնվում կոնֆլիկտային իրավիճակում վարքի կառուցողական մարտավարությունների հետ, միևնույն ժամանակ բացասական կապի մեջ են ագրեսիվության, թշնամանքի, ռիսկայնության հետ՝ նպաստելով կոնֆլիկտայկնության մակարդակի նվազեցմանը և կոնֆլիկտային իրավիճակի կառուցողական հաղթահարմանը:

5. Գործունեությունը կոնֆլիկտում արտացոլում է անձի մտածողության առանձնահատկությունները, որոնց թվում առանձնանում են ինքնատիպությունը, մշակվածությունը, ճկունությունը, արագությունը, անորոշության և հակասությունների հանդեպ նրա վերաբերմունքը:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Ատենախոսության ծավալը կազմում է 164 էջ, որտեղ ներառված են 21 աղյուսակներ և 31 նկարներ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության ներածական մասում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության նպատակը և խնդիրները, առարկան, օբյեկտը, ատենախոսության մեթոդաբանական հիմքերը և մեթոդները, աշխատանքի վարկածը, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, ատենախոսության կառուցվածքը:

Ատենախոսության առաջին՝ "Սուբյեկտի մտածողության և կոնֆլիկտայնության հիմնախնդիրը որպես հոգեբանական հետազոտության առարկա" գլխում տեսական վերլուծության է ենթարկվել մտածողության և դրա ստեղծագործական առանձնահատկությունների հիմնախնդիրը, ինչպես հայրենական (Կ.Վ. Ոսկանյան, Վ.Ս. Կարապետյան, Ա.Ս. Հովհաննիսյան, Ա.Կ. Անանյան, Կ.Վ. Ահարոնյան, Դ. Հայրապետյան և այլոք), այնպես էլ արտասահմանյան (Ա. Ն. Լեոնտև, Լ.Ս. Վիգոտսկի, Ս.Լ. Ռուբինշտեյն, Ժ. Պիաժե, Օ.Կ. Տիխոմիրով, Ա.Վ. Բրուշլինսկի, Յա.Ա. Պոնոմարյով, Ջ. Գիլֆորդ, Կ.Ա. Աբուլխանովա-Սլավսկայա և այլոք) գիտնականների հիմնական դրույթները:

Առաջին ենթագլխում քննարկվել են մտածողության, դրա ստեղծագործական առանձնահատկությունների հիմնախնդրի հայեցա-կարգային հիմնական մոտեցումները: Վեր են հանվել "ստեղծա-գործություն", "ստեղծագործական մտածողություն", "ինտելեկտ", "ստեղծարարություն" հասկացությունների գիտական բնորոշումները, որը հնարավորություն է ընձեռել բացահայտելու ստեղծագործական մտածողության առանձնահատկությունների դերն ու նշանակությունը կոնֆլիկտըային իրավիճակների լուծման գործընթացում: Միաժամանակ կոնֆլիկտային իրավիճակի արդյունավետ լուծման պայմաններում անձ-մտածողություն-իրավիճակ համագործակցող համակարգում արծարծվել է մտածողության տարբեր ձևերի և դրսևորումների ամբողջականացման հարցը:

Երկրորդ՝ „Կոնֆլիկտի և անձի կոնֆլիկտայնության հիմնախնդիրը տարբեր ուղղություններում և մոտեցումներում" ենթագլուխը նվիրված է անձի կոնֆլիկտայնության և կոնֆլիկտի հիմնախնդրի վերլուծությանը հոգեվերլուծական, սոցիոլոգիական, վարքաբանական, կոգնիտիվ ուղ-ղությունների տեսանկյունից, ինչպես նաև Ն.Վ. Գրիշինայի, Ա.Յա. Անցուպովի, Ս.Ռ. Գևորգյանի, Բ.Ի. Հասանի, Վ.Ս. Մերլինի, Ֆ.Ե. Վասիլյուկի, Յու. Ն. Եմելյանովի մոտեցումները: Կոնֆլիկտի էության և առանձնահատկությունների ինչպես նաև կոնֆլիկտային իրավիճակների ծագման, զարգացման և կառուցողական ելքի ապահովման հարցերում

տարբեր պատկերացումների հիման վրա հիմնավորվել է անձի, նրա կոնֆլիկտայնության, կոնֆլիկտակայունության առաջատար դերը:

Հետազոտության երրորդ՝ „Կոնֆլիկտի ծագման խնդիրը օբյեկտիվ նախադրյալների հիման վրա“ ենթագլխում վերլուծվել են կոնֆլիկտային իրավիճակի ծագումն ու զարգացումը պայմանավորող գիտնականների կողմից առանձնացված տարբեր փոփոխականների (անձնային, իրավիճակային, կոգնիտիվ) փոխկապակցվածության առանձնահատկությունները, ձևակերպվել են կոնֆլիկտի հետազոտման հայեցակարգային հիմքը: Մեր կողմից կարևորվել է անձի կոնֆլիկտայնության ներքին և արտաքին պայմանների և պատճառների համակցությունը, որը հնարավորություն է տալիս կոնֆլիկտայնության կառուցվածքում տարանջատել կառուցողական և ապակառուցողական բնույթի բաղադրիչները:

Անձի համակարգում կոնֆլիկտայնության մակարդակը պայմանավորող տարբեր բաղադրիչների փոխազդեցությունը, մտածողության կոգնիտիվ և ստեղծագործական բաղադրիչների նշանակությունը քննարկվել է չորրորդ՝ “Մտածողության կոգնիտիվ և անձնային առանձնահատկությունների ազդեցությունը կոնֆլիկտային իրավիճակի զարգացման վրա” ենթագլխում: Գրականության աղբյուրների համակողմանի վերլուծության հիման վրա (Մ.Ա. Խոլոդնայա, Լ.Ս. Վիգոտսկի, Օ.Կ. Տիխոմիրով, Կ.Վ. Ոսկանյան, Յա.Ա. Պոնոմարյով, Ջ. Գիլֆորդ, Ռ. Ստենբերգ, Բ.Գ. Անանև և այլոք) վեր են հանվել մտածողության գործընթացի առանձին բաղադրիչներն ու փուլերը, որի արդյունքում կազմվել է կոնֆլիկտային իրավիճակում հակասությունների լուծման գործընթացում մտածողության փուլային զարգացման ընդհանրացված մոդելը:

Երկրորդ՝ “Կոնֆլիկտների լուծման հարցում մտածողության դերի փորձարարական հետազոտման մեթոդոլոգիայի վերլուծություն և գնահատում” գլխում վերլուծված են հիմնախնդրի փորձարարական հետազոտության մեթոդաբանական հիմքերը, անձի կոնֆլիկտայնության և կոնֆլիկտային իրավիճակի պատճառականության օբյեկտիվ փորձարարական հետազոտման հակասականություններն ու դժվարությունները: Մասնագիտական գրականության վերլուծության արդյունքում ներկայացված է կոնֆլիկտային իրավիճակի կառուցողական կամ ապակառուցողական զարգացման տեսանկյունից միմյանց հետ փոխպայմանավորված գործոնների համակարգը, կոնֆլիկտի նկատմամբ անձի վերաբերմունքը, կոնֆլիկտներում վարքի առանձնահատկությունների բնութագրերը: Հիմնավորվել է անձի կայացման փուլում հիմնախնդրի հետազոտման անհրաժեշտությունը: Ներկայացվել են հետազոտության նպատակը, խնդիրները և մեթոդները:

Առաջին՝ “Կոնֆլիկտայնության և կոնֆլիկտային իրավիճակի պատճառականության օբյեկտիվ հետազոտման հակասականությունը”

ենթագլխը նվիրված է անձի կոնֆլիկտայնության և կոնֆլիկտային իրավիճակի հետազոտության տարբեր մեթոդների կիրառման գիտական մոտեցումների վերլուծությանը, որի արդյունքում ուրվագծվել է հետազոտության կառուցվածքն ու շրջանակները: Հաշվի առնելով հետազոտվող հիմնախնդրի բազմաթիվ եզրույթները՝ անհրաժեշտություն է առաջացել կազմել նշանակալից փոփոխականների համակարգը, որոնք ներկայացված են փոխկապակցված գործոնների եռանկյան տեսքով:

Երկրորդ՝ „Հիմնախնդրի հետազոտման անհրաժեշտությունը անձի կայացման փուլում“ ենթագլխում վերլուծվում են մտածողության զարգացման (Լ.Ս. Վիգոտսկի, Ժ. Պիաժե, Ա.Վ. Բրուշլինսկի և այլոք), կյանքի տարբեր ոլորտներում կոնֆլիկտների և ճգնաժամերի (Ս. Խուդոյան, Դ.Ի. Ֆելդշտեյն, Ա. Վ.Սեմյոնով և այլոք), ագրեսիայի և դեվիանտ վարքի (Ս. Արզումանյան, Ն.Վ. Մայսակ, Ա. Բանդուրա, Ա.Ա. Ռեան և այլոք) հիմնահարցերը, որոնց համատեքստում քննարկվում է տվյալ տարիքային փուլում անձի կոնֆլիկտայնության հատուկ կարգավիճակը՝ որպես զարգացման գործընթացի անհրաժեշտ բաղադրիչ, որը նաև կապված է անձի կոգնիտիվ և ստեղծագործական որակների հետ:

Երրորդ ենթագլխում հիմնավորված են փորձարարական հետազոտության նպատակը, խնդիրները, ներկայացված են փուլերը, ընտրանքը, խմբերի բաժանման չափանիշները, մանրամասն նկարագրվել են հետազոտության մեթոդներն ու մեթոդիկաները:

Ատենախոսության երրորդ՝ „Մտածողության առանձնահատկությունների և անձի կոնֆլիկտայնության հետազոտության արդյունքների վերլուծություն“ գլխում փորձարարական հետազոտության փուլերին համապատասխան՝ ներկայացված է հետազոտության արդյունքների բազմակողմանի քանակական և որակական վերլուծությունը: Փորձարարական հետազոտությունը կազմված է չորս փուլերից, որոնում իրականացված աշխատանքների բովանդակությունը ներկայացված է ատենախոսության 77-80 էջերում:

Առաջին ենթագլխում վերլուծվել և մեկնաբանվել են ավագ դպրոցականների և ուսանողների խմբերի հոգեբանական առանձնահատկությունների համեմատական վերլուծությունը: Խմբերը կազմվել են ստեղծագործական գործունեության չափանիշի հիման վրա, իսկ հետազոտվողներին պայմանականորեն անվանել ենք „ստեղծարար“ և „ոչ ստեղծարար“՝ ելնելով նրանց գործունեության բնույթից (հանրակթական և արվեստի դպրոցներ):

Հետազոտության ընթացքում կիրառված տարբեր մեթոդիկաների տվյալների ընդհանրացման և ամփոփման արդյունքում վերլուծվում է կոնֆլիկտային իրավիճակի հաղթահարմանը նպաստող կառուցողական և ապակառուցողական գործոնների հարաբերակցությունը:

Հետազոտության արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ ստեղծարար հետազոտվողների մոտ դիտարկվում է բարձր ինտելեկտի և ստեղծագործական մտածողության մակարդակ, մասնավորապես արտահայտված են մտքի ճկունությունը, արագությունը, ինքնատիպությունը, մշակվածությունը, ինչպես նաև երևակայությունը, ինչը հաստվում է նաև Ռ.Քեթելի ինտելեկտուալ անձնային հատկանիշների ցուցանիշներով: Վերոհիշյալ գործոնները կոնֆլիկտային իրավիճակների կառուցողական հաղթահարման տեսակետից մեր կողմից դիտարկվում են որպես հիմնական: Ոչ ստեղծարար հետազոտվողների խմբում ավելի արտահայտված են այնպիսի հատկություններ, ինչպիսիք են՝ ռիսկայնությունը, կասկածամտությունը, վիրավորանքը, ագրեսիվությունը, թշնամանքը, կոնֆլիկտայնության ընդհանուր մակարդակը: Նշված գործոնները խթանում են կոնֆլիկտների առաջացումը և հետագա թեժացումը:

Հետազոտության վերլուծության արդյունքում բացահայտվել է հետաքրքիր օրինաչափություն, որ ստեղծագործական մտածողության և ինտելեկտի ցուցանիշների աճը ուղիղ համեմատական է կոնֆլիկտային իրավիճակում կառուցողական վարքի ընտրությանը և հակառակ համեմատական է մրցակցային և զիջողական վարքային մոդելներին, որոնք չեն նպաստում իրավիճակի և նրա հիմքում ընկած հիմնախնդրի լուծմանը:

Երկրորդ ենթագլխում տղաների և աղջիկների խմբերի համեմատական վերլուծության հիման վրա բացահայտվել է սեռային գործոնի դերը: Հետազոտությանը մասնակցել են երկու սեռի 200 ավագ դպրոցական և ուսանող, 4 խումբ՝յուրաքանչյուրում 50 փորձարկվող:

Աղյուսակ թիվ 1-ի արդյուքների վերլուծությունը ցույց է տալիս, որ աղջիկների ստեղծագործական մտածողության ցուցանիշները ավելի բարձր են, ինչպես դպրոցականների /76,8/, այնպես էլ՝ ուսանողների /79,12/ շրջանում: Աղջիկների ստեղծագործական մտածողության մակարդակը գերազանցում է անգամ միջին նորմատիվային ցուցանիշը, որը հաշվարկվել է ամբողջ ընտրանքի համար /74,5/:

Հետազոտության արդյունքները հաստատում են նաև կոնֆլիկտային իրավիճակում սեռերին բնորոշ վարքի տարբերությունները: Մասնավորապես՝ տղաները ավելի հաճախ նախընտրում են մրցակցությունը, իսկ աղջիկները՝ համագործակցությունն ու փոխզիջումը, որոնք հիմնված են կողմերի շահերը հաշվի առնելու, երկուստեք շահավետ լուծումներ գտնելու պատրաստակամության վրա: Բաս-Դարկի հարցարանի տվյալների համաձայն, ագրեսիվության ինդեքսը ավելի բարձր է տղաների մոտ, իսկ թշնամանքը գերազանցում է անգամ միջին նորմատիվային ցուցանիշը /10,46/:

Աղյուսակ 1. Ավագ դպրոցական և ուսանող աղջիկների և տղաների հետազոտման արդյունքների համեմատական վերլուծություն

	Խումբ 1	Խումբ 2	Խումբ 3	Խումբ 4
Ստեղծ. մտածող.	**66,2***	**76,08***	**69,56***	**79.12***
ինտելեկտ	66,16	63,1	65,92	68,68
ռիսկայնություն	**15***	**13,5***	**15,14***	**13,2***
երևակայություն	9,58	10,9	9,46	9,44
ագրեսիվություն	**19.95***	**17.93***	**21.78***	**18.52***
թշնամանք	10.08	9.45	10.46	9.82
կոնֆլիկտայնություն	**48,06***	**38,42***	**47,96***	**42,86***
մրցակցություն	**6,12***	**3,26***	**7,88***	**3,96****
համագործակցություն	**5,24***	**7,02***	5,44	5,9
փոխզիջում	6,44	6,94	**5,62***	**7,2***
զիջում	**5,72***	**6,56***	5,48	6,04
խուսափում	6,12	6,12	**5,24***	**6,8***

- p<0.05. խմբեր՝ 1-դպրոցական տղաներ, 2-դպրոցական աղջիկներ, рупны 3 – ուսանող տղաներ, 4- ուսանող աղջիկներ

Այսպիսով, հետազոտության համեմատական վերլուծության արդյունքների ընդհանրացումը ցույց է տալիս, որ աղջիկներին բնորոշ մտածողության առանձնահատկությունները, որոնք բնութագրվում են որպես դիվերգենտ, ստեղծագործական, նպաստում են նոր լուծումներ գտնելու գործընթացին, որի արդյունքում նվազում է ագրեսիվությունը, և դա հնարավորություն է ստեղծում կառուցողական մարտավարությունների կիրառման համար:

Երրորդ ենթագլուխը արտացոլում է հարաբերակցային վերլուծության արդյուքները և դրանց հոգեբանական մեկնաբանումները: Ստեղծագործական մտածողության, ինտելեկտի, վարքային և անձնային գործոնների փոխկապակցվածության առանձնահատկությունների բացահայտման նպատակով կիրառվել են մաթեմատիկական վիճակագրության մեթոդները: Մասնավորապես կիրառվել է հարաբերակցային վերլուծությունը՝ ըստ Սպիրմենի: Այն թույլ է տալիս գնահատելու կոնֆլիկտային իրավիճակի շարժը պայմանավորող այլ գործոնների հետ հարաբերակցության մեջ գտնվող մտածողության առանձնահատկությունների դերը:

Հարաբերակցային արժեքների վերլուծության արդյուքում (նկար1) բացահայտվել են միջին և թույլ արտահայտված կապեր ստեղծագործական մտածողության, հետաքրքրասիրության, կոնֆլիկտում կառուցողական վարքի միջև, ինտելեկտի, անձի հուզական /I,O/ և ինտելեկտուալ /M,Q1/ բնութագրիչների միջև: Արդյունքների վերլուծու-

թյունը թույլ է տալիս հանգել այն եզրակացության, որ ստեղծագործական մտածողության արտահայտվածության բարձր մակարդակը կապված է ինտելեկտի, հետազոտական ակտիվության, երևակայության, մտածողության վերլուծականության, գերզգայունության և տագնապայնության արտահայտվածության հետ:



Նկար 1. Ստեղծագործական մտածողության, անձնային և վարքային գործոնների հարաբերակցությունը

Միաժամանակ բացահայտված է նշանակալից բացասական հարաբերակցություն ստեղծագործական մտածողության, ռիսկայնության /-0,65/, ագրեսիվության /-0,68/, թշնամանքի /-0,54/, կոնֆլիկտայնության /-0,68/, մրցակցության /-0,66/ միջև: Այստեղ նույնպես դիտարկվուն է հետաքրքիր օրինաչափություն. որքան բարձր է ստեղծագործական մտածողությասն մակարդակը, այնքան ավելի թույլ են արտահայտված կոնֆլիկտի առաջացմանն ու թեժացմանը նպաստող գործոնները:

Աղյուսակ 2. Q1 գործոնի գործակիցների և վարքի առանձնահատկությունների հարաբերակցությունը

Q1	Խումբ 1	Խումբ 4	Խումբ 2	Խումբ 3
Ագրեսիվ	-0,46*	-0,42*	-0,35*	-0,35*
Թշնամանք	-0,35*	-0,44*	-0,3*	-0,37*
Մրցակց	-0,41*	-0,45*	-0,34*	-0,27*
Համագործ	0,48*	0,41*	0,234071	0,39*

- p<0.05

Ինտելեկտուալ շարքի առաջատար Q1 գործոնը (աղյուսակ թիվ 2), որը բնութագրում է մտածողության վերլուծականությունը, դրական հարաբերակցության մեջ է համագործակցության և բացասական՝ ագրեսիվության, թշնամանքի և մրցակցության հետ:

Համանման պատկեր է արձանագրվել նաև երևակայության զարգացման աստիճանը բնութագրող M գործոնի ցուցանիշներում: Նշանակալից կապեր են բացահայտվել նշված գործոնի, կոնֆլիկտայնության /-0,49/ և ռիսկայնության /-0,65/ միջև: Մասնավորապես դեռահասների խմբում, որքան բարձր է երևակայության զարգացման աստիճանը, այնքան ցածր է կոնֆլիկտայնությունը, իսկ կոնֆլիկտային իրավիճակներում նախապատվությունը տրվում է համագործակցության մարտավարությանը:

Այսպիսով, բաղդատելով հետազոտության արդյունքները, կարելի է եզրակացնել, որ հետազոտված խմբերում բացահայտված հարաբերակցությունների արտահայտվածությունն ու մոդուլները վկայում են, որ ստեղծագործական մտածողությունը, ինտելեկտուալ անձնային գործոնները դրանանորեն են նպաստում կոնֆլիկտային իրավիճակում կառուցողական վարքի դրսևորումներին, որի արդյունքում նվազում է անձի կոնֆլիկտայնության մակարդակը: Մասնավորապես՝ ստեղծագործական մտածողության այնպիսի առանձնահատկություններում, ինչպիսիք են ինքնատիպությունն ու մշակվածությունը, որոնք արտահայտված դրական կապերի մեջ են գտնվում նպաստավոր և բացասական կապերը խոչընդոտող գործոնների հետ (նկար 2):



Նկար 2. Ստեղծագործական մտածողության և վարքային բնութագրիչների հարաբերակցությունը

Դիտարկելով տարբեր գործոնների դերի և նշանակության հարցը՝ հետազոտության ընթացքում կարևորվել են նաև հուզական գործոնները: Գործոնների հուզական բլոկից ստեղծագործական մտածողության հետ առավել փոխկապակցված են տագնապայնության մակարդակի գործոնը O և I-ը, որը Ռ. Քեթթելի կողմից բնութագրվել է որպես “ծրագրավորված հուզական զերզգայունություն”:

Համաձայն հարաբերակցային արդյունքների վերլուծության՝ տագնապայնությունը դրական կապեր ունի ստեղծագործական մտածո-

ղության, մասնավորապես ինքնատիպության /0.56/ և մշակվածության հետ /0.54/: Բացասական կապեր են բացահայտվել O գործոնի և ագրեսիվության /-0,38/, դեռահասների մոտ՝ թշնամանքի /-0,5/, ուսանողների մոտ՝ կոնֆլիկտայնության /-0,42/ միջև:

Համաձայն հոգեվերլուծական մոտեցման՝(Զ. Ֆրեյդ, Ն. Մակ-Վիլյամս և այլոք), տագնապայնությունը նպաստում է որոշակի պաշտպանական մեխանիզմների ակտիվացմանը, որոնք անհրաժեշտ են լարվածության հաղթահարման, տագնապի աղբյուրից եկող ազդակների չեզոքացման համար: Ռ. Քեթելի անձնային որոշ գործոնների միջև նշանակալից հարաբերակցային կապեր են բացահայտվել միայն ստեղծարար փորձարկվողների խմբերում, որը մեր կարծիքով պայմանավորված է ստեղծարար անձանց անհատական առանձնահատկություններով: Ստեղծարար փորձարկվողների խմբերում բացասական հարաբերակցություն է բացահայտվել ստեղծագործական մտածողության, ինքնատիպության և հուզական կայունությունը բնութագրող գործոնի միջև: Միևնույն ժամանակ այս գործոնը փոխկապակցված է ագրեսիվության, թշնամանքի, կոնֆլիկտայնության հետ: Հետևաբար, հուզական անկայունությունը նպաստում է ագրեսիվության, թշնամանքի, մրցակցության ուժգնացմանը, որի դեպքում անձը հազվադեպ է զնում զիջումների և համագործակցության:

Աղյուսակ 3. C գործոնի, ագրեսիվության, թշնամանքի, կոնֆլիկտայնության հարաբերակցությունը

C	ռիսկ	ագրես	թշնամ	մրցակց	համագ	զիջում	կոնֆլ
խումբ 1	0,47*	0,62*	0,43*	0,39*	-0,4*	-0,36*	0,35*
խումբ 4	0,31*	0,48*	0,37*	0,5*	-0,49*	-0,32*	0,31*

- p<0.05

Բացահայտվել է նաև այն հետաքրքիր օրինաչափությունը, որ որքան բարձր են ստեղծագործական մտածողության և դրա դրսևորման ինքնատիպության ցուցանիշները, այդքան ցածր են C, H, Q3,Q4, գործոնների ցուցանիշները: Ինչպես ցույց է տալիս հետազոտության արդյունքների հետագա վերլուծությունը, ստեղծարար խմբերում հուզական անկայունությունը, “Ես-ի լարվածության” ցածր մակարդակը, սոցիալական կապերի հուզական հագեցվածությունը, կախվածությունը տրամադրությունից, հույզերը վերահսկելու դժվարությունները և այլ երևույթներ փոխկապակցված են ստեղծագործական մտածողության հետ: Ստեղծարար հետազոտվողների խմբերում բոլոր նշված գործոնները դրական կապեր են արձանագրել կոնֆլիկտային իրավիճակների զարգացման ապակառուցողական բաղադրիչների հետ:

Տեսական և փորձարարական հետազոտության արդյունքների հոգեբանական վերլուծությունը հնարավորություն տվեց հանգել հետևյալ եզրակացությունների.

1. Ստեղծագործական մտածողությունը սերտորեն փոխկապակցված է ինտելլեկտուալ անձնային բնութագրիչների, հետազոտական ակտիվության, երևակայության, վերլուծական մտածողության, ռեֆլեքսիայի բարձր մակարդակի հետ, ինչպես նաև հուզական բնութագրիչների և կոնֆլիկտային փոխազդեցության կառուցողական մարտավարությունների ընտրության հետ: Միևնույն ժամանակ, ստեղծագործական մտածողությունը առաջնային նշանակություն ունի կոնֆլիկտային իրավիճակի կառուցողական լուծման և անձի կոնֆլիկտայնությունը որոշող գործոնների հարցում: Կոնֆլիկտայնության բաղադրիչների հետ փոխկապակցվածության տեսանկյունից՝ առավել նշանակալից են ինքնատիպությունն ու մշակվածությունը:

2. Ստեղծագործական մտածողության առանձնահատկությունները և ինտելեկտը ապահովում են կոնֆլիկտային իրավիճակի և նրանում մասնակիցների փոխըմբռնման որակը, ինքնավերլուծության, ռեֆլեքսիայի հնարավորությունները, որոնք նպաստում են ագրեսիայի վիճակում անձի գործողությունների գիտակցական վերահսկողությանը, հուզական ինքնակարգավորմանը, կոնֆլիկտային իրավիճակներում կառուցողական մարտավարությունների ընտրությանը: Ստեղծագործական մտածողությունը նպաստում է հուզական վիճակների վերամշակմանը, ագրեսիվ իմպուլսների փոխակերպմանը, որի արդյունքում տեղի է ունենում նորի ստեղծման գործընթաց, ինչը նպաստում է իրավիճակի կառուցողական հաղթահարմանը: Ստեղծագործական մտածողությունը, ինտելեկտը, ինտելեկտուալ անձնային որակները նպաստում են կոնֆլիկտային իրավիճակում վարքի կառուցողական ձևերի ընտրությանը, նվազեցնում են անձի ագրեսիվությունը, թշնամանքը, որի արդյունքում նվազում է նաև նրա կոնֆլիկտայնությունը: Հետևաբար, անձի ստեղծագործական մտածողության զարգացումը նոր հնարավորություններ է ստեղծում կոնֆլիկտային իրավիճակների արդյունավետ հաղթահարման համար:

3. Անձի կոնֆլիկտայնությունը համալիր գործոնների առանձնահատկությունն է, որոնք դրսևորվում են անձի տարբեր ենթահամակարգերում. կոմունիկատիվ համակարգում՝ որպես հաղորդակցման սղաճ, սոցիալական ինքնարտահայտման կաշկանդվածություն, սոցիալական շփումների նվազում, ռիսկայնություն, հուզական ոլորտում՝ որպես բարձր տագնապայնություն, մեղքի զգացում, հուզական անկայունություն, անվստահություն, լարվածություն, իմպուլսիվություն, թշնամանք, ագրեսիվություն:

4. Մտածողությունը և վարքը կոնֆլիկտային իրավիճակում ունեն նաև սեռային առանձնահատկություններ: Մասնավորապես աղջիկների մոտ ավելի զարգացած է ստեղծագործական մտածողությունը, որը նպաստում է իրավիճակի կոնֆլիկտային բնույթի գիտակցմանը, կոնֆլիկտի հիմքում ընկած հակասության բացահայտմանը, որը զուգակցվելով կոնֆլիկտում իր մասին պատկերացումների առանձնահատկությունների, ռեֆլեքսիայի, համագործակցության և փոխզիջման, ինչպես նաև հարաբերությունները պահպանելու միտման հետ՝ նպաստավոր պայմաններ է ստեղծում նոր, ոչ ստանդարտ որոշումներ կայացնելու համար: Ստեղծարար անձանց մոտ արտահայտված են հուզական զերզգայունությունը, երևակայությունը, ռեֆլեքսիան, ինտուիցիան, ինքնամփոփությունը, ինտելեկտը և ստեղծագործական ներուժը, բարձր տագնապայնությունը: Ոչ ստեղծարար անձինք շփվող են, միջանձնային հարաբերությունների և սոցիալական կապերի հաստատման հարցում ակտիվ, էքսպրեսիվ են, իմպուլսիվ, հակված են ռիսկի, նրանց մոտ արտահայտված են առաջնորդի հատկությունները, էքստրավերտ են: Հուզական ոլորտում բնութագրվում են պրագմատիզմով, հուզական պարզեցվածությամբ: Կոնֆլիկտային իրավիճակների կարգավորման հարցում հուզական անկայունությունը կարող է ինչպես խթանել կոնֆլիկտայնությունն ու ագրեսիան, այնպես էլ արգելակել անձի կարգավորման և հաղթահարման հնարավորությունները, որը պայմանավորված է նրա ստեղծագործական մտածողության և ստեղծարարության արտահայտվածությամբ: Ստեղծագործական մտածողությունը և ինտելեկտը կոնֆլիկտային իրավիճակում հանդես են գալիս որպես ինքնակարգավորման և վարքի կառավարման մեխանիզմ:

Ատենախոսության հիմնական դրույթները արտացոլված են հետևյալ գիտական հրատարակումներում.

1. Тевосян М. В. Восприятие и мышление в конфликтной ситуации. Влияние когнитивных процессов на развитие агрессии. “Մտածողություն և վարք” հոդվածների ժողովածու “Զանգակ”, Երևան 2001, էջ 234-242

2. Тевосян М. В. Конфликт и психическая реальность. Հոգեբանություն և կյանք, № 2, “Զանգակ”, Երևան, 2002, էջ 19-25

3. Тевосян М.В. Взаимосвязь особенностей мышления и поведения личности в конфликтной ситуации.Բանբեր Երևանի համալսարանի, 140.4, Երևան, 2013, էջ 64-70

4. Тевосян М. В. Влияние творческого мышления на особенности поведения юношей и девушек в конфликтной ситуации. ՀՊՄՀ 90-ամյակին նվիրված գիտական նյութերի ժողովածու, I ՊՐԱԿ, “Մանկավարժ”, Երևան 2013, էջ 59-63

ТЕВОСЯН МАРИЯ ВРАМОВНА

СООТНОШЕНИЕ ОСОБЕННОСТЕЙ МЫШЛЕНИЯ И КОНФЛИКТНОСТИ ЛИЧНОСТИ

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата психологических наук по специальности 19.00.01. “Общая психология, теория и история психологии, психология личности”.

Защита диссертации состоится 28 октября 2014 г. в 12.00 на заседании специализированного совета философии и психологии 064 ВАК РА по присуждению ученых степеней при Армянском государственном педагогическом университете имени Х. Абовяна, по адресу: 0010, г. Ереван, ул. Тигран Мец, 17.

РЕЗЮМЕ

Актуальность исследования. Проблема разрешения конфликтных ситуаций, снижения уровня конфликтности, приобретает особое значение в условиях трансформационного общества, подчеркивая значение познавательных и творческих характеристик личности.

Цель исследования. Изучение особенностей мышления в соотношении с компонентами конфликтности личности.

Гипотеза исследования: Предполагается, что выраженность особенностей мышления, обуславливающих разрешение конфликтных ситуаций, способствует снижению уровня конфликтности личности. Творческие компоненты, особенности мышления снижают агрессивные, враждебные проявления личности, способствуя выбору и построению новых форм конструктивного поведения.

Задачи исследования:

1. Посредством изучения специальной литературы проанализировать проблему исследования мышления.
2. Проанализировать основные подходы к проблеме конфликта и психологических компонентов конфликтности личности.
3. Выявить влияние когнитивных и личностных особенностей мышления на разрешение конфликтной ситуации.
4. Экспериментальным путем выявить особенности мышления, личностные свойства, влияющие на конфликтное поведение у старшеклассников и студентов в группах с творческой и нетворческой деятельностью, а так же у юношей и девушек.
5. Исследовать взаимосвязь особенностей мышления с личностными особенностями и поведением в конфликтной ситуации у творческих и нетворческих старшеклассников и студентов.
6. Выявить особенности взаимосвязи мышления и эмоций как компонентов конфликтности личности.

Научная новизна исследования. Сделана попытка изучить взаимосвязи и взаимодействие основных компонентов конфликтности личности как факторов, влияющих на развитие конфликтных ситуаций, где особенности мышления рассматриваются в качестве конструктивного фактора, влияющего на конфликтность личности. Выявлены конструктивные и деструктивные факторы, определяющие уровень конфликтности личности и их влияние на развитие конфликтных ситуаций. Установлены особенности соотношения творческого мышления с эмоциональными, личностными и поведенческими характеристиками личности.

Теоретическая значимость исследования состоит в том, что разработка проблемы соотношения особенностей мышления и конфликтности личности проливает свет на теорию психологии мышления, а так же обогащает научные представления и психологические концепции конфликтности и формирования личности. Настоящее исследование позволяет уточнить и расширить представления об особенностях творческого мышления личности, его влияния на формирование конструктивного поведения в конфликтных ситуациях и снижения конфликтности личности.

Практическая значимость исследования. Полученные данные могут использоваться в организациях для диагностики деструктивных тенденций и с целью предупреждения эскалации конфликтности в межличностных отношениях. Методические рекомендации и практические разработки могут применяться в групповой и индивидуальной коррекционной работе в психологических центрах при школах и других организациях. Материалы исследования могут быть использованы школьными психологами для диагностики мышления, конфликтности личности и повышения психологической компетентности учителей, направленной на профилактику и разрешения конфликтов.

Во введении обоснована актуальность темы исследования, раскрыта научная новизна, определена теоретическая и практическая значимость.

В первой главе “Проблема мышления субъекта и его конфликтности как предмет психологического исследования” представлен теоретический анализ проблемы мышления и конфликтности личности.

Во второй главе “Анализ и оценка методологии экспериментального исследования проблемы роли мышления в разрешении конфликтов” представлены методологические основы, цель, задачи, организация и методы исследования.

В третьей главе “Количественный и качественный анализ результатов исследования соотношения особенностей мышления и конфликтности личности” представлен разносторонний анализ результатов проведенного исследования в соответствии с этапами эмпирического исследования.

Структура и объем диссертации. Диссертация состоит из введения, трех глав, заключения, библиографического списка использованной литературы и приложений. Общий объем составляет 164 страницы, которые включают 21 таблицу и 31 рисунок.

TEVOSYAN MARIA VRAM

CORRELATION OF PECULARITIES OF A PERSON'S THINKING AND COMFLICTNESS

Thesis for degree of candidate of psychological sciences, in the area of specilization 19.00.01 –"General Psychology, Theory and History of Psychology, Personality Psychology".

The defense of the thesis will be held on October the 28th of 2014 at 12.00 at the session of the Special Board of philosophy and psychology 064 HAC awarding degrees under the Armenian State Pedagogical University after K.H. Abovyan, address: 17 Tigran Mets, Yerevan, 0010.

SUMMARY

The relevance of the research. The issues of conflict resolution and decreasing the level of conflictness gain a special meaning in the terms of transformational society, emphasizing the meaning of cognitive and creative characteristics of the person.

The aim of the research is to reveal thinking pecularities in relation to the components of a person's conflictness.

The scientific hypothesis of the research. The emphasis of thinking pecularities,allowing arising of conflict situations, are considered to be contributing to the decreasing of the level of a person's conflictness.Creative components, thinking pecularities decrease the person's agressive, hostile behavior, contributing to the selection and building of new forms of constructive behivor.

For the fulfillment of the principal aim the following goals have been put forward.

The research issues are as follows:

1. To analyze the problem of thinking by means of studies in professional literature.
2. To analyize the basic approaches to the problem of the conflict and psychological components of the conflicntess of a person.
3. To reveal the impact of cognitive and personality thinking pecularities on the resolution of a conflict situation.
4. To reveal thinking pecularities, personal characteristics affecting the conflict behavior of high school and university students in creative and non-creative groups, as well as that of girls and boys through an experiment.
5. To study the correlation of thinking pecularities with personal characteristics and behavior in a conflict situation among creative and non-creative high school and university students.
6. To reveal the pecularities of thinking and emotions as components of conflictness.

The scientific novelty of the research. An attempt was made to study the correlation of main components of conflictess as factors affecting the development of conflict situations, where thinking pecularities are observed as a constructive factor which has an impact on the conflictness of the person. Constructive and destructive factors, defining the level of conflictness of the person and their impact on the development of conflict situations are revealed. The pecularities of correlation of creative thinking with emotional, personal and behavioral characteristics of a person are defined.

The theoretical significance of the research shows that the working out the problem of correlation of thinking pecularities and the conflictness of the person sheds light on the theory of the psychology of thinking, as well as enriches psychological conceptions.The present research allows to clarify and enlarge notions on creative thinking of a person, his/her impact on the formulation of constructive behavior in conflict situations and the decreasing of the conflictness of a person.

The practical significance of the research. The received data can be used in organizations for the diagnosis of destructional tendencies and with the aim of preventing from conflicts. Methodical recommendations and practical suggestions can be used in group and individual correctional work in psychological centers at schools and other organizations. The resarch material can be used by school psychologists for the diagnosis of thinking, conflictness and improving of psychological competencies of the teachers.

The introduction embarces the issue of relevance, the principal hypothesis, itsscientific novelty, the theoretical and practical significance of the research

Chapter one entitled "The problem of a person's thinking and his/her conflictness as a subject of psychological research", represents the theoretical analysis of the problem of thinking and the conflictness of the person.

Chapter two, entitled "The analysis and assessment of methodologies of experimental research problem of the role of thinking in conflict resolution", represents methodological groudns, aim, issues, organization and methods of the research.

Chapter three, entitled "The quantitative and qualitative analysis of the reseach results of the correlation of thinking pecularities and conlfictness of the person", represents the diverse analysis of the research results, conducted in accordance with the stages of experimental research.

The thesis structure and volume. The thesis consists of introduction, three chapters, conclusion, bibliography and attachments. The total volume is 164 pages, including 21 tables, 31 figures.